ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 հուլիսի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

97
(3306)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՋԱՏՎՈՒՄ Է ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԿԱԴՐԵՐԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ազգային Ժողովի աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը չի ստանա պատգամավորական մանդատ: Մինչ այդ էլ, մեր տեղեկություններով, նա հույս ուներ պահպանել ԱԺ աշխատակազմի ղեկավարի պաշտոնը, սակայն նոր խորհրդարանի նախագահի պաշտոնակատար Ռուբեն Ռուբինյանը նրան չի վերանշանակելու: Սաբոտաժի ռիսկ կա ԱԺ-ում:

Մեր տեղեկություններով՝ Առաքելյանը, որը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համամասնական ընտրացուցակի 107-րդ համարն է, գործնականում զրկվում է պատգամավոր դառնալու հնարավորությունից, քանի որ հերթը մինչեւ այդ համարը չի հասնելու: Նույնիսկ եթե հետագայում ցուցակում հերթաշարժ տեղի ունենա, իշխանական շրջանակներում քննարկվում է, որ նա, ամենայն հավանականությամբ, ստիպված կլինի հրաժարվել մանդատից:

Այսպիսով, Առաքելյանը միաժամանակ կանգնում է երկու կորուստների առաջ՝ զրկվելով թե՛ աշխատակազմի ղեկավարի պաշտոնից, թե՛ պատգամավորական մանդատ ստանալու հնարավորությունից:

Դավիթ Առաքելյանի քաղաքական կենսագրությունն ուշագրավ է նաեւ նրանով, որ նա համարվում է ԱԺ նախկին նախագահ Ալեն Սիմոնյանի ամենամտերիմ մարդկանցից մեկը եւ աշխատակազմի ղեկավարի պաշտոնում նշանակվել էր հենց Սիմոնյանի պաշտոնավարման ընթացքում: Բացի այդ, նա հայտնի է նաեւ որպես ՔՊ վարչության անդամ Հասմիկ Հակոբյանի զուգընկեր:

Իշխանական շրջանակներում «Զուկ» մականունով հայտնի Դավիթ Առաքելյանի ապագա զբաղվածության հարցն այս պահին բաց է մնում: Եթե մեր տեղեկությունները հաստատվեն, ապա նա Ալեն Սիմոնյանի քաղաքական թիմի մյուս ներկայացուցիչների նման կմնա առանց պաշտոնի, իսկ հետագա պաշտոնավարման հարցը, ըստ մեր աղբյուրների, կախված կլինի արդեն Ալեն Սիմոնյանի քաղաքական հնարավորություններից եւ նոր պայմանավորվածություններից:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախկին նախարար Մխիթար Հայրապետյանը, որը հրաժարվել էր շարունակել աշխատանքը կառավարության կազմում, հրաժարվել է նաեւ Ազգային Ժողովի պատգամավորի մանդատից: Հիշեցնենք, որ կառավարության կազմում Հայրապետյանի աշխատանքը չշարունակելու փաստը հաստատել էր նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: «Ժողովուրդ»-ի տեղեկություններով՝ Մխիթար Հայրապետյանը, որը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համամասնական ընտրացուցակի 36-րդ համարն էր եւ ընտրվել էր պատգամավոր, ինքնաբացարկի դիմում է ներկայացրել: Ուշագրավ է, որ սա արդեն երկրորդ նման հրաժարականն է նույն քաղաքական շրջանակում: Ավելի վաղ պատգամավորական մանդատից հրաժարվել էր նաեւ Մխիթար Հայրապետյանի քավորը՝ Վաղարշակ Հակոբյանը՝ բիզնեսով զբաղվելու հրապարակային պատճառաբանությամբ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ փոփոխությունները չեն սահմանափակվում միայն անձամբ Հայրապետյանի որոշմամբ: Նրա ղեկավարած ոլորտում եւս կադրային տեղաշարժերն արդեն մեկնարկել են. նախարարի թիմի ներկայացուցիչները հերթով ազատման դիմումներ են ներկայացնում՝ սկսած նախարարի տեղակալներից:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

2024 թվականի փետրվարի 27-ին Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, անդրադառնալով եղբոր կնոջ՝ Անի Գեւորգյանի քրեական հետապնդմանը, հայտարարում էր, թե տեղի ունեցածը «սխալմունք» է, իսկ նրա հարազատը որեւէ առնչություն չունի իրեն վերագրվող արարքի հետ: Սակայն ընդամենը մի քանի ամիս անց պարզվեց, որ իրականությունը բոլորովին այլ է: Գլխավոր դատախազությունը պաշտոնապես հաստատեց, որ Անի Գեւորգյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ թե անմեղ լինելու, ոչ էլ մեղադրանքի անհիմն լինելու պատճառով, այլ գործուն զղջման հիմքով: Այսինքն՝ հարսը խոստովանել է իր հանցանքը եւ իր պաշտպանի միջոցով միջնորդել է կիրառել հենց գործուն զղջման ինստիտուտը: Սա նշանակում է, որ ամիսներ առաջ Ազգային Ժողովի նախագահի հրապարակային հայտարարությունն այն մասին, թե իր եղբոր կնոջ նկատմամբ հարուցված մեղադրանքը պարզապես «սխալմունք» է, փաստացի չի համընկել հետագայում նույն քրեական վարույթում արձանագրված իրավական իրողությունների հետ: ՀՀ քրեական օրենսգրքով գործուն զղջման հիմքով քրեական հետապնդման դադարեցումը կիրառվում է այն դեպքերում, երբ անձը համագործակցում է վարույթն իրականացնող մարմնի հետ, ընդունում է իրեն վերագրվող փաստական հանգամանքները, եւ առկա են օրենքով նախատեսված մյուս պայմանները:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



ՀՀ Ազգային Ժողովի ութերորդ գումարման ամենաքիչ հիշվող, բայց ամենահաճախ սկանդալային պատմությունների կենտրոնում հայտնված պատգամավորներից մեկը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Էմմա Պալյանը, հաջորդ խորհրդարանում այլեւս չի լինի: ՔՊ-ի նախընտրական ցուցակում զբաղեցնելով ընդամենը 93-րդ հորիզոնականը՝ նա փաստացի դուրս է մնում խորհրդարանից: Էմմա Պալյանի քաղաքական կենսագրությունը երկար պատմություն չունի: ՔՊ-ին անդամակցել է 2016 թվականին, իսկ մինչեւ պատգամավոր դառնալը՝ 2019-2021 թվականներին, աշխատել է Ազգային Ժողովի պատգամավոր Կարեն Սարուխանյանի օգնական: Սակայն խորհրդարան մտնելուց հետո նա հանրության ուշադրության կենտրոնում հայտնվեց ոչ այնքան օրենսդրական նախաձեռնություններով կամ խորհրդարանական ակտիվությամբ, որքան մեկը մյուսին հաջորդած աղմկահարույց պատմություններով, որոնք պարբերաբար քննարկման թեմա էին դառնում թե՛ մամուլում, թե՛ սոցիալական ցանցերում: Թերեւս ամենահնչեղ պատմությունը վերաբերում էր այն բացահայտմանը, որն արեց հենց «Ժողովուրդ» օրաթերթը: Պարզվեց՝ պատգամավորն իր ամուսնուն գրանցել էր որպես հասարակական հիմունքներով օգնական:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ Է»

ArmLur.am-ը զրուցել է «Վերածնվող Արցախ» ՀԿ-ի նախագահ Անասաս Իսրայելյանի հետ: ArmLur.am-ի հետ զրույցում Անասաս Իսրայելյանն անդրադարձել է Արցախի Հանրապետության պետական ինստիտուտների պահպանմանը:

- Վերջին շրջանում ակտիվ քննարկվում է, թե ով է լինելու Արցախի Հանրապետության հաջորդ նախագահը, եւ ընդհանրապես՝ լինելո՞ւ է ընտրություն, թե՞ ոչ: Ի՞նչ տեղեկություններ ունեք այդ քննարկումների մասին, ի՞նչ է տեղի ունենում Արցախի ներկայացուցչության շենքում, եւ կա՞ արդեն վերջնական որոշում Արցախի պետական ինստիտուտների ապագայի վերաբերյալ:

- Այսօր արցախահայության համար ամենակարեւոր հարցերից մեկը հենց Արցախի Հանրապետության պետական ինստիտուտների պահպանումն է: Մենք հայտնվել ենք մի իրավիճակում, երբ պարտավոր ենք անել ամեն ինչ այդ կառույցները պահպանելու եւ հետագայում վերականգնելու համար: Համոզված եմ՝ դրա համար անհրաժեշտ հնարավորությունները դեռ կան: Ես անձամբ ներգրավված եմ այդ գործընթացներում, տեղեկացված եմ ընթացող քննարկումներից եւ արդեն բացահայտ եմ խոսում այդ մասին, որովհետեւ մեծ վտանգ եմ տեսնում՝ Արցախի Հանրապետության ինստիտուտների վերջնական լուծարման եւ պետականության կորստի առումով: Վերջին շրջանում նկատում եմ մտահոգիչ զարգացումներ: Եթե հարցը հասել է նրան, որ խնդիրն անձերի շուրջ է՝ ով պետք է ընտրվի Ազգային Ժողովի նախագահ, ապա՝ Հանրապետության նախագահ, ապա սա սխալ մոտեցում է: Սահմանադրությունը հնարավորություն է տալիս ընտրություններ կազմակերպել, եւ խնդիրը թեկնածուների բացակայությունը չէ: Խնդիրն այն է, որ շատերը չեն ցանկանում ստանձնել այդ պատասխանատվությունը: Վերջին հանդիպումը տեղի է ունեցել շաբաթ օրը: Քննարկմանը մասնակցել են նաեւ Հանրային խորհրդի ներկայացուցիչները, որոնք նույնպես ընդգծել են, որ Արցախի պետական ինստիտուտները պետք է պահպանվեն, եւ անձնական հարցերը չպետք է խոչընդոտեն այդ գործընթացին: Սակայն ես ավելի վտանգավոր միտումներ եմ տեսնում: Իմ գնահատմամբ՝ կան միտումնավոր քայլեր, որոնք ուղղված են այդ կառույցների կազմաքանդմանը:

- Ի՞նչ նկատի ունեք, երբ ասում եք՝ միտումնավոր քայլեր:

- Կարծում եմ՝ որոշ պատգամավորներ, որոնք այժմ բնակվում են Հայաստանում, մտավախություն ունեն, որ եթե մասնակցեն այդ գործընթացին, կարող են կորցնել Հայաստանում ունեցած իրենց ունեցվածքը: Իմ կարծիքով՝ նման մոտեցումն անընդունելի է: Երբ պետականության պահպանման հարցը ստորադասվում է անձնական շահերին, դա ես համարում եմ անպատասխանատու եւ անթույլատրելի վարքագիծ: Ընդ որում՝ ես այստեղ բոլոր պատգամավորներին նկատի չունեմ: Կան պատգամավորներ, որոնք այսօր, ինչպես հազարավոր արցախցիներ, ամեն ինչ կորցրել են եւ նույնիսկ տաքսի են վարում՝ ընտանիքը պահելու համար: Խոսքս վերաբերում է կոնկրետ այն շրջանակներին, որոնք նախկինում եղել են իշխանության մաս եւ, իմ գնահատմամբ, այսօր էլ ստվերային գործընթացներով փորձում են խոչընդոտել ինստիտուտների պահպանմանը:

- Դուք ակնարկում եք նախկին նախագահ Արայիկ Հարությունյանի շրջապատի՞ն:

- Այո, հիմնականում խոսքը վերաբերում է այդ քաղաքական շրջանակներին: Նրանք հրապարակային հայտարարում են, թե կարեւորում են Արցախի պետական ինստիտուտների պահպանումը, սակայն, իմ տեղեկություններով, ներքին մակարդակում այլ վարքագիծ են դրսեւորում: Անուններ այս պահին չեմ ցանկանում նշել, որովհետեւ գործընթացները դեռ շարունակվում են: Սակայն եթե այդ մարդիկ իրենց գործողություններով նպաստեն Արցախի Հանրապետության ինստիտուտների լուծարմանը, հասարակությունը պետք է իմանա, թե ովքեր են պատասխանատուները: Ես բոլորին կոչ եմ անում չկրկնել այն սխալները, որոնք հանգեցրին այս ծանր իրավիճակին: Եթե այսօր հնարավորություն կա պահպանելու Արցախի պետական ինստիտուտները, ապա որեւէ մեկը իրավունք չունի խոչընդոտելու այդ գործընթացը:

- Ի՞նչ եք առաջարկում: Ո՞վ պետք է լինի նախագահը: Քննարկվել է նաեւ Ձեր անունը, ինչպես նաեւ Արցախի նախկին պետնախարար Նժդեհ Իսկանդարյանի անունը: Եթե պատգամավորները համաձայնության չգան, պատրա՞ստ եք ստանձնել այդ պատասխանատվությունը:

- Ես չեմ ցանկանում, որ հարցը հասնի անձերի շուրջ քննարկումների: Ամեն ինչ պետք է իրականացվի բացառապես Արցախի Հանրապետության Սահմանադրության եւ օրենքների շրջանակում: Այնուամենայնիվ, եթե խնդիրը միայն թեկնածուի բացակայությունն է, ապա ես հրապարակայնորեն հայտարարել եմ, որ պատրաստ եմ ստանձնել այդ պատասխանատվությունը: Եթե իմ թեկնածությունն օգնի պահպանել Արցախի պետական ինստիտուտները, ապա պատրաստ եմ այդ քայլն անել: Կարծում եմ՝ այսօր ամենակարեւորը ոչ թե անձի հարցն է, այլ պետականության պահպանումը:

- Եթե ստանձնեք այդ պատասխանատվությունը, ինչպե՞ս եք աշխատելու Հայաստանի գործող իշխանության հետ:

- Եթե մենք անկեղծորեն առաջնորդվում ենք ազգային եւ պետական շահերով, ապա համագործակցության հնարավորություններ միշտ կան: Այսօր Արցախի ժողովրդի իրավունքները Հայաստանի համար կարող են դառնալ կարեւոր քաղաքական գործոն, հատկապես միջազգային հարթակներում: Մենք տեսնում ենք, որ Ադրբեջանը շարունակում է ամեն օր խոսել Արցախի մասին, ինչը նշանակում է, որ այդ հարցն իր համար փակված չէ: Հետեւաբար մենք եւս պետք է պահպանենք մեր պետական ինստիտուտները եւ շարունակենք պայքարել Արցախի ժողովրդի իրավունքների համար: Համոզված եմ, որ ժամանակի ընթացքում Արցախի հարցը կարող է դառնալ Հայաստանի կարեւորագույն քաղաքական ու դիվանագիտական գործիքներից մեկը: Ես չեմ կարծում, որ պետք է հրաժարվել պետական կառույցներից միայն այն պատճառով, որ իրավիճակը բարդ է: Ընդհակառակը՝ հենց այս պայմաններում է անհրաժեշտ պահպանել դրանք:

- Կա՞մ վերջնաժամկետ, մինչեւ երբ պետք է ընտրվեն Արցախի Հանրապետության նախագահն ու Ազգային Ժողովի նախագահը:

- Ժամանակը շատ չէ: Գիտեմ, որ մոտ ապագայում պետք է կայացվեն հստակ որոշումներ: Վտանգն այն է, որ կան ուժեր, որոնք ցանկանում են ձգձգել գործընթացը եւ հասցնել ինստիտուտների լուծարմանը: Ես կարծում եմ, որ դա չպետք է թույլ տրվի: Այս պահին ամենակարեւոր խնդիրը Արցախի Հանրապետության պետական ինստիտուտների պահպանումն է, եւ բոլոր որոշումները պետք է կայացվեն հենց այդ նպատակից ելնելով:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԱԶԱՏՄԱՆ ԴԻՄՈՒՄ Է ԳՐԵԼ

ArmLur.am-ի իրազեկ աղբյուրները փոխանցում են, որ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը պաշտոնից ազատման դիմում է գրել:

ArmLur.am-ը Կենտրոնական ընտրական հանձնաժողովից տեղեկացել էր, որ Արայիկ Հարությունյանը պատգամավորական մանդատից հրաժարվելու վերաբերյալ ինքնաբացարկի դիմում չի ներկայացրել: Նշենք, որ ArmLur.am-ը Արայիկ Հարությունյանի՝ Փաշինյանի «սեւ ցուցակում» հայտնվելու եւ պաշտոնը թողնելու վերաբերյալ բազմիցս է գրել: Ընդհուպ՝ ArmLur.am-ը վարչապետ Փաշինյանին էր հարց ուղղել, թե արդյոք Արայիկ Հարությունյանի վերաբերյալ իրեն զեկուցվել են տեղեկություններ, որոնք զայրացրել են իրեն, եւ արդյոք հենց այդ պատճառով է քննարկվում նրան վարչապետի աշխատակազմի ղեկավարի պաշտոնում չվերանշանակելու հարցը:

Ի պատասխան՝ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, որ Արայիկ Հարությունյանի մասով իրեն որեւէ տեղեկություն չի զեկուցվել եւ հավելեց, որ նույն պատասխանը վերաբերում է նաեւ երկրորդ հարցին: Սակայն ուշագրավ է, որ վարչապետը որեւէ կերպ չհերքեց եւ չհաստատեց գլխավոր հարցը՝ Արայիկ Հարությունյանը վերանշանակվելու է իր պաշտոնում, թե ոչ:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՀՐԱԺԱՐՎԵԼ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ «Ուժեղ Հայաստան» դաշինքի պատգամավորության թեկնածուներ են հրաժարվել մանդատից: Մանդատներից հրաժարվել են Ավետիս Առաքելյանը՝Վարդան Ղուկասյանի փեսան, Գոհար Մելոյանը, Լիլյա Շուշանյանը եւ Արթուր Դանիելյանը:

Ս. Գ.

ՀԵՌԱՑՐԻՆ

Ազգային Ժողովի նախագահի տեղակալ, ԱԺ նախագահի թեկնածու Ռուբեն Ռուբինյանը կարգադրություն է ստորագրել, որով պաշտոնից ազատվել է Ազգային Ժողովի նախագահի ռեֆերենտ Էդգար Մուրադյանը:

Կարգադրության համաձայն՝ Էդգար Մուրադյանը պաշտոնից կազատվի 2026 թվականի օգոստոսի 3-ից՝ իր դիմումի հիման վրա, որը ներկայացրել էր հուլիսի 16-ին:

Նշենք, որ ArmLur.am-ը դեռ 2024 թվականին էր գրել, որ ԱԺ նախկին նախագահ Ալեն Սիմոնյանի ստորագրությամբ այդ պաշտոնին նշանակված Մուրադյանը վարձատրվում, սակայն չէր ներկայանում աշխատանքի:

Նշենք, որ ռեֆերենտը ղեկավարի մասնագիտական օգնականն է, որը զբաղվում է փաստաթղթերի, վերլուծությունների եւ աշխատանքային նյութերի նախապատրաստմամբ:

ԱԶԱՏՄԱՆ ԴԻՄՈՒՄ Է ԳՐԵԼ

ՀԷՑ-ի Շիրակի մասնաճյուղի տնօրեն Սարիկ Մինասյանը քիչ առաջ դիմում է ներկայացրել՝ դադարեցնելու Գյումրու ավագանու անդամի իր լիազորությունները:

ArmLur.am-ի տեղեկություններով՝Մինասյանը պատրաստվում է վերցնել Ազգային Ժողովի պատգամավորի մանդատը: Մեր տեղեկություններով՝ նա խորհրդարանում կգործի մինչեւ Գյումրիում նախատեսվող քաղաքապետի նոր ընտրությունները:

Հիշեցնենք, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, որ Գյումրիում պետք է անցկացվեն քաղաքապետի նոր ընտրություններ: Այս պահին առկա տեղեկությունների համաձայն՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը քաղաքապետի թեկնածու է առաջադրելու հենց Սարիկ Մինասյանին, որը նաեւ գլխավորելու է կուսակցության ավագանու ընտրական ցուցակը:

Այսպիսով, մինչեւ տեղական ինքնակառավարման մարմինների նոր ընտրությունների անցկացումը, Սարիկ Մինասյանը կվերցնի Ազգային ժողովի պատգամավորի մանդատը:

Ս. Գ.

ՎԵՐՑՆԵԼՈՒ Է ՄԱՆԴԱՏԸ

Իշխանությունը Կոտայքի մարզպետի թեկնածու է փնտրում: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանը պատրաստվում է վերցնել պատգամավորական մանդատը: ArmLur.am-ի հետ զրույցում Սահակյանը նշեց. «Այո՛, գնալու եմ ԱԺ»:

Նշենք, որ Ահարոն Սահակյանը Կոտայքի մարզպետի պաշտոնում է 2021 թվականի մայիսից:

Ս. Գ.

ԵՐԿՈՒ ՆԱՎԹԱՏԱՐ Է ՈՉՆՉԱՑՎԵԼ

Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ) հայտարարել է, որ կիրակի ուշ երեկոյան ոչնչացրել է երկու նավթատար նավ, որոնք փորձել են անցնել Հորմուզի նեղուցի հարավային հատվածով՝ Իրանի կողմից «անվտանգ չհամարվող» եւ «վթարավտանգ» երթուղով:

ԻՀՊԿ-ի հայտարարության համաձայն՝ նավերը այդ երթուղին օգտագործել են ԱՄՆ-ի ճնշման ներքո: Կորպուսը նշել է, որ տարածաշրջանում ամերիկյան ներկայությունը «իրավական հիմք չունի» եւ սպառնացել է կոշտ պատասխանով:

«Քանի դեռ տարածաշրջանում շարունակվում են ԱՄՆ-ի գործողությունները, այս ջրային ճանապարհը անվտանգ չի լինի ոչ պարարտանյութերի, ոչ էլ նավթի ու գազի տեղափոխման համար»,- հայտարարել է ԻՀՊԿ-ն:

Իրանը նաեւ զգուշացրել է, որ միջադեպի համար «ագրեսոր բանակը» պետք է պատրաստ լինի պատասխան գործողությունների:

Հորմուզի նեղուցը, ըստ ԻՀՊԿ-ի, այս ամսվա սկզբից փակ է բոլոր նավերի համար, եւ այն կմնա փակ այնքան ժամանակ, քանի դեռ ԱՄՆ-ի միջամտությունները չեն դադարել:

ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՄԱՐՎԵԼ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը հայտարարել է, որ Ռուսաստանի Տամբովի եւ Մոսկվայի մարզերում Wildberries ընկերության պահեստներին հասցված հարվածները կարող են համապատասխանել միջազգային հումանիտար իրավունքի համաձայն ռազմական հանցագործության հատկանիշներին:

Ժնեւում այս մասին հայտարարել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի պաշտոնական ներկայացուցիչ Թամին Ալ-Խիթանը՝ պատասխանելով «ՏԱՍՍ» գործակալության հարցին:

«Ուկրաինական զինված ուժերի կողմից Տամբովի եւ Մոսկվայի մարզերում Wildberries-ի պահեստներին հասցված հարվածները կարող են ռազմական հանցագործություն համարվել՝ միջազգային հումանիտար իրավունքի նորմերի համաձայն», - նշել է Ալ-Խիթանը:

Միաժամանակ ՄԱԿ-ի ներկայացուցիչը ընդգծել է, որ դեպքի վերաբերյալ անհրաժեշտ է իրականացնել հետաքննություն՝ հանգամանքները պարզելու համար:

(Նշում՝ ՄԱԿ-ի պաշտոնական ներկայացուցիչը չի հայտարարել, որ հարվածներն արդեն իսկ ճանաչվել են որպես ռազմական հանցագործություն, այլ նշել է, որ դրանք կարող են նման բնույթ ունենալ եւ պահանջում են հետաքննություն:)

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ArmLur.am-ը գրում է, որ Ազգային Ժողովի պատգամավոր Ալեքսեյ Սանդիկովը, որը ազգային փոքրամասնության ներկայացուցիչ է, 2026 թվականի հունիսի արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո ձեւավորվող նոր Ազգային Ժողովում եւս կշարունակի իր աշխատանքը:



Սանդիկովը պատգամավոր է ընտրվել 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրություններում՝ «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի համապետական ընտրական ցուցակով: 2021 թվականի հունիսի 20-ի խորհրդարանական ընտրություններից հետո նա կրկին դարձել է պատգամավոր՝ արդեն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակով: 2026 թվականի հունիսի ընտրությունների արդյունքներով եւս նա ներկայացված կլինի նոր խորհրդարանում:

Ալեքսեյ Սանդիկովի վերջին տարիների հայտարարագրերի ուսումնասիրությունից երեւում է, որ 2021-2025 թվականներին նրա գույքային վիճակում տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ: Եթե 2021 թվականին պատգամավորի հայտարարագրում առկա էին Երեւանում բնակարան, Արագածոտնի մարզի Քուչակ համայնքում ձեռք բերված շինություն, JEEP ավտոմեքենա, շուրջ 15.3 մլն դրամ տրամադրված փոխառություններ «ԽԱՉ-9» ՍՊԸ-ին եւ 24.3 մլն դրամ վարկային պարտավորություններ, ապա 2025 թվականին նրա ակտիվների կազմում արդեն ներառված էր նաեւ Տավուշի մարզի Իջեւան համայնքում ձեռք բերված հողամասը: Այս ընթացքում նա ձեռք է բերել Ford մակնիշի ավտոմեքենա, վաճառել JEEP-ը, շարունակել է ունենալ «ԽԱՉ-9»-ին տրամադրված շուրջ 15.2 մլն դրամ փոխառություններ: Միաժամանակ նրա վարկային պարտավորությունները նվազել են՝ 24.3 մլն դրամից հասնելով 2024 թվականի վերջին հայտարարագրված 18.5 մլն դրամի: Նրա տարեկան եկամուտները եւս աճել են՝ 2021 թվականի շուրջ 8.2 մլն դրամից հասնելով 2025 թվականի 12.7 մլն դրամի:

2021 թվական. բնակարան, JEEP եւ 24.3 մլն դրամ վարկային պարտավորություն

2021 թվականի սկզբում Ալեքսեյ Սանդիկովին համատեղ սեփականության իրավունքով պատկանել է Երեւան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանում գտնվող բնակարան:

Նույն տարվա ընթացքում նա ձեռք է բերել եւս մեկ անշարժ գույք՝ Արագածոտնի մարզի Քուչակ համայնքում գտնվող շինություն: Հայտարարագրում նշված է, որ այն նոր կառուցված կամ կադաստրի կողմից հաշվառված ու գնահատված, սակայն դեռեւս իրավունքների պետական գրանցում չստացած շինություն է: Գույքը ձեռք է բերվել 2021 թվականի ապրիլի 7-ին՝ գնման եղանակով, իսկ ձեռքբերման արժեքը կազմել է 1 մլն դրամ:

2021 թվականին Սանդիկովը ունեցել է մեկ ավտոմեքենա՝

JEEP մակնիշի,

թողարկման տարեթիվ՝ 2015 թվական,

ձեռքբերման ամսաթիվ՝ 2020 թվականի հոկտեմբերի 8:

Տարվա ընթացքում նոր մեքենա չի ձեռք բերել եւ չի օտարել:

Պատգամավորը հայտարարագրել է «ԽԱՉ-9» ՍՊԸ-ին տրամադրած երեք փոխառություն՝

7 մլն 900 հազար դրամ,

6 մլն 135 հազար 446.1 դրամ,

1 մլն 251 հազար 300 դրամ:

Ընդհանուր գումարը կազմել է 15 մլն 286 հազար 746.1 դրամ:

Բոլոր փոխառությունների տոկոսադրույքը նշված է՝ 0 տոկոս:

Դրամական միջոցներ

Բանկային հաշիվներում տարվա սկզբում եղել են՝

436 հազար 16.9 դրամ,

1 մլն 800 հազար 565.38 դրամ:

Տարվա վերջին դրանք կազմել են՝

633 հազար 405 դրամ,

1 մլն 373 հազար 300.17 դրամ:

Կանխիկ գումարը տարվա սկզբում կազմել է 1 մլն դրամ, իսկ տարեվերջին՝ 1 մլն 600 հազար դրամ:2021 թվականին նրա ընդհանուր եկամուտը կազմել է 8 մլն 198 հազար 423.9 դրամ:2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սանդիկովի վարկային պարտավորությունները կազմել են 24 մլն 300 հազար դրամ:

2022 թվական. ձեռք է բերել Ford, եկամուտը կազմել է 8.4 մլն դրամ

2022 թվականին Սանդիկովի հայտարարագրում պահպանվել են Երեւանում բնակարանը եւ Քուչակում գտնվող շինությունը:

Նա ունեցել է երկու ավտոմեքենա՝

JEEP՝ 2015 թվականի արտադրության,

FORD՝ 2018 թվականի արտադրության:

Ford-ը ձեռք է բերվել 2022 թվականի հունիսի 30-ին՝ 5 մլն 900 հազար դրամով:

Պատգամավորը շարունակել է ունենալ «ԽԱՉ-9» ՍՊԸ-ին տրամադրված 15 մլն 286 հազար 746 դրամ փոխառությունները:

Բանկային հաշիվներում տարվա ընթացքում առկա են եղել տարբեր արժույթներով գումարներ, իսկ կանխիկ միջոցները տարվա սկզբի 1 մլն 600 հազար դրամից նվազել են մինչեւ 250 հազար դրամ:2022 թվականի ընդհանուր եկամուտը կազմել է 8 մլն 466 հազար 530 դրամ:- Վարկային պարտավորությունների մնացորդը կազմել է 454 հազար 72 դրամ:

2023 թվական. երկու ավտոմեքենա, 10.6 մլն դրամ եկամուտ

2023 թվականին պատգամավորի հայտարարագրում պահպանվել են՝

Երեւանում բնակարանը,

Քուչակ համայնքում գտնվող չգրանցված շինությունը,

JEEP եւ FORD ավտոմեքենաները:

Նոր գույք ձեռք չի բերել եւ որեւէ գույք չի օտարել:

«ԽԱՉ-9» ՍՊԸ-ին տրամադրված փոխառությունների չափը մնացել է նույնը՝ 15 մլն 286 հազար 746 դրամ:2023 թվականի ընթացքում Սանդիկովը ստացել է 10 մլն 672 հազար 653 դրամ եկամուտ:

Այդ թվում՝

ԱԺ աշխատակազմից՝ 9 մլն 957 հազար 444 դրամ,

ՊԵԿ-ից այլ եկամուտ՝ 715 հազար 209 դրամ:

Տարվա վերջում բնակարանի ձեռքբերման նպատակով վարկի մնացորդը կազմել է 5 մլն 542 հազար 009 դրամ:

2024 թվական. գնել է հողամաս, վաճառել JEEP-ը, ստացել 13.9 մլն դրամ եկամուտ

2024 թվականին Սանդիկովը ձեռք է բերել նոր անշարժ գույք՝ Տավուշի մարզի Իջեւան համայնքում գտնվող հողամաս:- Գույքը ձեռք է բերվել 2024 թվականի մայիսի 24-ին՝ 490 հազար դրամով: Նույն տարում նա վաճառել է JEEP մակնիշի ավտոմեքենան: Մեքենան օտարվել է 2024 թվականի սեպտեմբերի 20-ին՝ 3 մլն դրամով: Տարվա վերջին նրա սեփականության ներքո մնացել է Ford մակնիշի ավտոմեքենան: Պատգամավորը շարունակել է ունենալ «ԽԱՉ-9»-ին տրամադրված 15 մլն 286 հազար 746 դրամ փոխառությունները:

2024 թվականի եկամուտը կազմել է 13 մլն 916 հազար 925 դրամ:

Այդ թվում՝

ԱԺ աշխատավարձ՝ 10 մլն 162 հազար 729 դրամ,

JEEP-ի վաճառքից՝ 3 մլն դրամ,

ՊԵԿ վերադարձ՝ 754 հազար 196 դրամ:

Նա նաեւ հայտարարագրել է 8 մլն դրամ վերանորոգման ծախս: Տարվա վերջում վարկային պարտավորությունները կազմել են 18 մլն 570 հազար 960 դրամ:

2025 թվական. երեք անշարժ գույք, Ford, 15.2 մլն դրամ փոխառություն եւ 12.7 մլն դրամ եկամուտ

Հայտարարագրի համաձայն՝ 2025 թվականի սկզբին եւ վերջում նա ունեցել է երեք անշարժ գույք:

Դրանք են՝

Տավուշի մարզի Իջեւան համայնքում գտնվող հողամաս, որը ձեռք է բերվել 2024 թվականի մայիսի 24-ին,

Արագածոտնի մարզի Քուչակ համայնքում գտնվող շինություն, որը ձեռք է բերվել 2021 թվականի ապրիլի 7-ին,

Երեւանի Նոր Նորք վարչական շրջանում գտնվող բնակարան:

Պատգամավորը ունեցել է մեկ ավտոմեքենա՝ Ford: «ԽԱՉ-9» ՍՊԸ-ին տրամադրված փոխառությունները կազմել են՝

1 մլն 251 հազար 300 դրամ,

6 մլն 135 հազար 446.1 դրամ,

7 մլն 900 հազար դրամ:

Ընդհանուր՝ 15 մլն 286 հազար 746.1 դրամ:

Տարվա վերջում բանկային հաշիվներում առկա են եղել՝

27.9 ԱՄՆ դոլար,

1629.38 ռուսական ռուբլի,

1 մլն 113 հազար 646 դրամ,

210 հազար դրամ:

Կանխիկ գումարը կազմել է 1 մլն 500 հազար դրամ:

2025 թվականին Ալեքսեյ Սանդիկովի ընդհանուր եկամուտը կազմել է 12 մլն 737 հազար 782 դրամ: Ամբողջ գումարը եղել է ԱԺ աշխատակազմից ստացված աշխատանքի վարձատրություն եւ դրան հավասարեցված վճարումներ:

Այսպիսով, 2021-2025 թվականներին Ալեքսեյ Սանդիկովի հայտարարագրերում հիմնական փոփոխությունը եղել է նոր հողամասի ձեռքբերումը, ավտոմեքենաների փոփոխությունը եւ վարկային պարտավորությունների նվազումը: Նրա հիմնական ակտիվները մնացել են Երեւանում գտնվող բնակարանը, Քուչակում գտնվող շինությունը, «ԽԱՉ-9»-ին տրամադրված շուրջ 15.3 մլն դրամ փոխառությունները եւ Ford մակնիշի ավտոմեքենան:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՓՈՐՁՈՒՄ Է ԴՈՒՐՍ ՀԱՆԵԼ ՏՆԻՑ

ԴԱՏԻ Է ՏՎԵԼ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ 2026 թվական հուլիսի 17-ին ԱԺ նախկին պատգամավոր Տիգրան Արզաքանցյանի կինը՝ Նատալյա Ռոտենբերգը, դիմել է ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ ոստիկանությանը ք.Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Հ. Աբայան փողոց 2/2 բնակելի տուն հասցեից Նատալյա Սերգեյի Ռոտենբերգին վտարելուն ուղղված գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու պահանջով:

Դատարանը գտել է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ եւ 74-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, հետեւաբար, հայցադիմումը պետք է ընդունել վարույթ: Արդյունքում որոշել է Նատալյա Ռոտենբերգի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ ոստիկանության՝ ՀՀ ոստիկանությանը ք.Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Հ. Բաբայան փողոց 2/2 բնակելի տուն հասցեից Նատալյա Ռոտենբերգին վտարելուն ուղղված գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու պահանջի մասին, ընդունել վարույթ եւ գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով: Գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման օր հայտարարել 2026 թվականի նոյեմբերի 03-ը: Հիշեցնենք, որ ԱԺ նախկին պատգամավոր, գործարար Տիգրան Արզաքանցյանն ու Նատալյա Ռոտենբերգն արդեն պաշտոնապես ամուսնալուծված են: Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը երեկ հրապարակել է վճիռը՝ բավարարելով Ռոտենբերգի հայցը: Տեղեկությունը հաստատել էր Նատալյա Ռոտենբերգի փաստաբան Հասմիկ Մարտիրոսյանը:

Հիշեցնենք, որ զույգը միասին ապրել է 8 տարի, այս տարվա մայիսի 15-ին Նատալյա Ռոտենբերգը հայց է ներկայացրել դատարան՝ ամուսնալուծության պահանջով: Ավելի վաղ հաղորդվել էր, որ Նատալյա Ռոտենբերգը հաղորդում է ներկայացրել ՆԳՆ ոստիկանության Արաբկիրի բաժին՝ հայտնելով ամուսնու կողմից իր նկատմամբ բռնության մասին: Արզաքանցյանը, սակայն, պաշտոնապես հաստատել էր, որ կինն իրապես հաղորդում ներկայացրել է՝ գտնվելով «չար մարդկանց» ազդեցության ներքո: Նա պնդել է, որ որեւէ բռնություն երբեւէ չի գործադրել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎԵԼ

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի եւ ընտրական հանցագործությունների քննության վարչությունում ավարտվել է ՀՀ ՊՆ նախկին նախարար Ս.Ս.-ի կողմից Գյումրի քաղաքի Սեւ բերդ ամրոցն օտարելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը: Քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ՀՀ պաշտպանության նախկին նախարար Ս.Ս.-ն 2005 թվականի մայիսի 11-ին անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով, ուղղակի վաճառքով՝ 22 մլն 951 հզր 500 ՀՀ դրամով ֆիզիկական անձի է օտարել ՀՀ Կառավարության որոշումներից չբխող եւ դրանցով չնախատեսված հանրապետական նշանակության՝ պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձան հանդիսացող 626.45քմ մակերեսով Գյումրի քաղաքի Սեւ բերդ ամրոցը եւ դրա օգտագործման համար նախատեսված 0.7 հա հողամասը: Նկարագրված գործողությունների արդյունքում էական վնաս է պատճառվել պետության օրինական շահերին՝ անզգուշությամբ առաջացնելով ծանր հետեւանքներ, այն է՝ պետությունը կորցրել է հանրապետական նշանակության պատմամշակութային արժեքի նկատմամբ սեփականության իրավունքը եւ այն չի ընդգրկվել 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն ՀՀ պետական սեփականություն համարվող եւ օտարման ոչ ենթակա պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման կից հավելվածներում: Նախաքննության ընթացքում հսկող դատախազի որոշմամբ Ս.Ս.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը, որն անզգուշությամբ առաջացրել է այլ ծանր հետեւանք): Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

ԶԵՆՔ ԵՎ ԹՄՐԱՄԻՋՈՑ

Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ծառայողները օպերատիվ տեղեկություն էին ստացել, որ 43-ամյա տղամարդը իր կողմից շահագործվող մեքենայում զենք եւ զինամթերք է պահում: Քրեական ոստիկանները Ավան համայնքի Մարշալ Բաբաջանյան փողոցում ստուգման նպատակով կանգնեցրել են 43-ամյա տղամարդու վարած մեքենան, որի սրահի ակնհայտ տեսանելի հատվածում կար զենքի նմանվող առարկա: Տղամարդը ձերբակալվել եւ մեքենայով հանդերձ՝ տեղափոխվել է վարչություն: Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված խուզարկությամբ մեքենայում հայտնաբերվել են «Hagan» տեսակի ակոսափող թմբուկավոր ատրճանակ՝ լիցքավորված 7,62 մմ տրամաչափի 7 փամփուշտով, մեթամֆետամին տեսակի թմրամիջոց, նույն թմրամիջոցի հետքերով տարա եւ մեթադոն տեսակի թմրամիջոց:

ԼՈՒՐԵՐ

Ո՞Վ Է ՍՊԱՆՎԱԾԸ

Հայտնել էինք, որ Էրեբունիում 30-ից ավել կրակոցների հետեւանքով սպանվածը 20-ամյա Վահե Մկրտչյանն է: Վերջինս հենց Էրեբունի վարչական շրջանի բնակիչ է: Լուսանկարում սպանված երիտասարդն է:

ArmLur.am-ին հայտնի էր դարձել, որ կրակոցների հետեւանքով վիրավորված 15-ամյա Գ. Մարգարյանը եւս միջադեպի հետ կապ ունի, եւ նրա վիրավորումը պատահականության հետեւանքով չէ:

Հուլիսի 18-ին հայտնել էինք, որ կրակոցներ են հնչել Էրեբունի վարչական շրջանում: Տեղեկությունների համաձայն՝ Երեւանում հնչած 30-ից ավելի կրակոցների եւ մեկ անձի սպանության դեպքի վայրում ուշագրավ իրավիճակ էր եղել:



Սակրավորների խումբ էր շտապել դեպքի վայր, քանի որ դեպքի վայրում հայտնաբերվել էր նռնակ, որը, բարեբախտաբար, չէր պայթել:

Shamshyan.com-ը հայտնել էր, որ հուլիսի 18-ին մարտաֆիլմ հիշեցնող կրակոցներ էին հնչել Երեւանում: Ժամը 21:00-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչությունում եւ նույն գլխավոր վարչության Երեւանի քրեական վարչությունում միաժամանակ օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Մուրացան 109 հասցեում միջադեպ է տեղի ունեցել, որի ժամանակ հնչել են կրակոցներ, եւ կա զոհ:

Դեպքի մասին պաշտոնական հաղորդագրություն տարածեց Քննչական կոմիտեն՝ հայտնելով, որ սպանության, սպանության փորձի, հրազենի ապօրինի շրջանառության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում 1 անձ ձերբակալվել է:

Ք. Մ.

ԾՆՎԵԼ Է ՏԻԳՐԱՆԻ ԵՂԲԱՅՐԸ

Հուլիսի 20-ին՝ Կոտայքի մարզ կատարած այցի ընթացքում, ՆԳ նախարար Արփինե Սարգսյանն այցելել է Մարմարիկում բնակվող Պետրոսյանների ընտանիք՝ շնորհավորելու նրանց փոքրիկ Տիգրանի լույս աշխարհ գալու առթիվ: Ընտանիքում ծանր կորուստներից հետո կրկին հնչել է մանկան ձայնը՝ լցնելով տունը նոր հույսով ու ջերմությամբ: Այս մասին հայտնում են ՆԳՆ-ից:

Նախարարը ընտանիքին մաղթել է առողջություն, ամրություն, խաղաղ ու երջանիկ օրեր՝ ընդգծելով, որ փոքրիկի ծնունդը նոր հույսի եւ կյանքի շարունակության խորհրդանիշ է:

Պետրոսյանները շնորհակալություն են հայտնել նախարարին՝ մշտական ուշադրության, հոգատարության եւ մշտապես իրենց ընտանիքի կողքին լինելու համար:

2-ամյա Տիգրանի մահից հետո, 2025-ի հոկտեմբերի մահացել էր նաեւ նրա հայրը՝ Նորայր Պետրոսյանը: Նրա մահից կարճ ժամանակ անց կինն իմացել էր, որ հղի է:

ԿԱՄԵՑՎԵԼ Է

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից վերահսկողական միջոցառում է անցկացվել անհատ ձեռնարկատեր Վիտալի Առուստամյանին պատկանող հանրային սննդի օբյեկտում (ք. Երեւան, Կիեւյան 16/2. շաուրմայանոց), որի ընթացքում հայտնաբերվել են սանիտարահիգիենիկ նորմերի խախտումներ: Մասնավորապես՝

- սննդի կառույցի պատերը չեն ունեցել հարթ մակերես, չեն պահվել նորոգ վիճակում.
- սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող սարքավորումները պատշաճ չեն մաքրվել ու ախտահանվել:

Հանրային սննդի օբյեկտի արտադրական գործունեությունը կասեցվել է, տնտեսավարողին հանձնարարվել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ եւ սննդի կառույցը համապատասխանեցնել օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Խախտումների վերացման համար սահմանվել է ժամկետ:

● *Հանրապետությունում հուլիսի 17-ից 20-ը հայտնաբերվել է 19 հետախուզվող, կամավոր ներկայացել է 2-ը:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՉԵՆ ՏՎԵԼ

Իջեւան համայնքի Լուսաձոր գյուղից լրագրողիս բողոքել են, որ Լուսաձորի դպրոցի նոր շենքի շինարարությունում աշխատել են գյուղի բազմաթիվ բնակիչներ, որոնք չեն ստացել մայիս եւ հունիս ամիսների աշխատավարձը, եւ որպեսզի դպրոցի շենքի կառուցումը չկանգնի, շինարարական ընկերությունը տաջիկ բանվորներ է ներգրավել: Լուսաձորցիները նաեւ դժգոհ են, որ դպրոցի նոր շենքի շրջակա ասֆալտն անորակ է արվել:

Բողոքի հետքերով հուլիսի 20-ին այցելեցի Լուսաձոր: Դպրոցի կողքին բանվորական համազգեստով, թուխ տեսքով բանվորներ էին աշխատում, տաջիկներ: Տեղեկացա, որ դպրոցի շինարարությունում հուլիսի 17-ից աշխատում են 9 տաջիկներ: Դպրոցի կողքին խմբված անձանց ներկայացա որպես լրագրող, հարցրի, թե նրանցից ով է կրթահամալիրի շինարարությունն իրականացնող հիմնարկության ղեկավարը: Երիտասարդներից մեկը ներկայացավ որպես դպրոցի շենքը կառուցող «Վի քեյ գրուպ» ՍՊԸ հիմնադիր տնօրեն Հրաչյա Քոթանջյան: Նրանից տեղեկացա, որ Լուսաձորի դպրոցը կառուցվում է Տարածքային զարգացման հիմնադրամի ծրագրով: Հարցրի՝ որքան է Լուսաձորի դպրոցի շինարարության ծրագրի արժեքը: Հ. Քոթանջյանը պատասխանեց, որ չի հիշում: Նրան հայտնեցի դպրոցի շինարարությունում աշխատած բանվորների դժգոհությունը՝ 2 ամսվա աշխատավարձը չստանալու առթիվ: Ասաց, որ իրենք ունեն բազմաթիվ փոքր ենթակապալառու կազմակերպություններ, որոնց իրենք փոխանցել են գումարները, այդ կազմակերպությունները պետք է աշխատավարձ վճարեն բնավորներին: Քոթանջյանին հարցրի, թե երբ է գործարկվելու դպրոցի շենքը: Պատասխանեց՝ նոյեմբերին: Նրան ասացի՝ գուցե սեպտեմբերի՞ն: Նա ճշտեց՝ սեպտեմբերին, հետո հավելեց, որ դրանից շուտ են շինարարությունն ավարտելու: Նա տեղեկացրեց՝ որպեսզի դպրոցի շենքի գործարկումը շուտ լինի, իրենց կողմից իրականացվող Տավուշի մարզի Աղավնավանք գյուղի դպրոցի շինարարությունից բանվոր տաջիկներ են բերել Լուսաձոր: Նրան փոխանցեցի լուսաձորցիների դժգոհությունը նորակառույց դպրոցի շուրջ արված ասֆալտի որակի մասին: Ինքս էլ տեսա ու իրեն ասացի, որ նոր արված ասֆալտի շերտի մեջ քարեր են երեւում: Հ. Քոթանջյանը լրագրողիս հակադարձեց՝ ասֆալտի մասնագե՞տ եք: Մեր զրույցի ընթացքում ասֆալտի որակի վերահսկողը քիչ հեռու ստուգումներ էր անում 4 սմ հաստությամբ, մեկ շերտով փռված ասֆալտի որակի վերաբերյալ: Նրան հարցրի ասֆալտի որակի մասին, նա ասաց, որ որոշ թերություններ կան:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՊՀ

ԱՄԵՆԱՊԱՀԱՆՋՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայտնի են Երեւանի պետական համալսարանի 2026 թվականի ընդունելության արդյունքները: ArmLur.am-ը ուսումասիրել է, թե որ մասնագիտություններն են ամենապահանջվածը եղել դիմորդների շրջանում, իսկ որ ուղղություններում է ընդունվածների թիվը մնացել նվազագույնը:

2026 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ԵՊՀ բոլոր կրթական ծրագրերով դիմել էր 3 հազար 658 դիմորդ: Համալսարանում ընդհանուր հատկացված տեղերի թիվը կազմել էր 2 հազար 389, որոնցից 465-ը՝ անվճար (պետպատվերով), իսկ 1 հազար 924-ը՝ վճարովի ուսուցման համակարգում:

Ամենապահանջված մասնագիտությունները

Դիմորդների թվով բացարձակ առաջատարը «Իրավագիտություն» 305 դիմորդ: Հենց այս մասնագիտության դեպքում է արձանագրվել նաեւ ամենաբարձր մրցակցությունը. վճարովի համակարգում անցողիկ միավորը կազմել է 38.75-39.75:Սակայն ընդունվել է վճարովի՝ 138 ուսանող, իսկ անվճար՝ 2 ուսանող:

Ամենապահանջված մասնագիտությունների ցանկում հաջորդում են.

«Ինֆորմատիկա եւ կիրառական մաթեմատիկա»՝ 239 դիմորդ,

«Միջազգային հարաբերություններ»՝ 211 դիմորդ,

«Սերվիս»՝ 187 դիմորդ,

«Տնտեսագիտություն»՝ 161 դիմորդ,

«Հոգեբանություն»՝ 145 դիմորդ,

«Ֆինանսներ»՝ 139 դիմորդ,

«Հանրային կառավարում»՝ 135 դիմորդ,

«Կառավարում»՝ 124 դիմորդ:

Վճարովի համակարգում որտեղ են ամենաշատ ուսանողները

Վճարովի ընդունելության արդյունքներով առաջին տեղում «Ինֆորմատիկա եւ կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիրն է, որտեղ ընդունվել է ավելի քան 120 ուսանող:

Դրան հաջորդում են.

«Միջազգային հարաբերություններ»՝ 109-ից ավելի ընդունված,

«Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն)»՝ 89-ից ավելի,

«Կառավարում»՝ 68-ից ավելի,

«Տնտեսագիտություն»՝ 60-ից ավելի,

«Հոգեբանություն»՝ 60,

«Հանրային կառավարում»՝ 57-ից ավելի,

«Քաղաքագիտություն»՝ 52,

«Իրավագիտություն»՝ 46-ից ավելի ուսանող:

Ո՞ր բաժիններում են ամենաքիչ ուսանողներն ընդունվել

Մյուս կողմից, մի շարք բնագիտական եւ հումանիտար մասնագիտություններում ընդունվածների թիվը զգալիորեն փոքր է եղել:

Ամենացածր ցուցանիշը գրանցվել է «Աշխարհագրություն» մասնագիտությունում, որտեղ ընդունվել է ընդամենը 4 ուսանող, իսկ առավելագույն միավորը կազմել է 22.50:

Ամենաքիչ ընդունվածներ ունեցող մյուս ծրագրերն են.

«Արվեստաբանություն»՝ 6 ուսանող,

«Սոցիալական մանկավարժություն»՝ 10,

«Քարտեզագրություն եւ կադաստրային գործ»՝ 11,

«Սոցիալական աշխատանք»՝ 16,

«Ադրբեջանագիտություն»՝ 17,

«Իրանագիտություն»՝ 19 ուսանող:

Որտե՞ղ են հատկացվել ամենաշատ անվճար տեղերը

Անվճար (պետպատվերով) տեղերի ամենամեծ թիվը հատկացվել է STEM՝ բնագիտական եւ ճշգրիտ գիտությունների ուղղություններին:

Առավելագույն՝ 47-ական անվճար տեղ հատկացվել է.

«Ֆիզիկա»,

«Ռադիոֆիզիկա եւ համակարգչային տեխնոլոգիաներ» կրթական ծրագրերին:

Դրանց հաջորդում են.

«Ինֆորմատիկա եւ կիրառական մաթեմատիկա»՝ 40 անվճար տեղ,

«Կիրառական վիճակագրություն եւ տվյալների գիտություն»՝ 26,

20-ական անվճար տեղ՝

«Մաթեմատիկա»,

«Ակտուարական եւ ֆինանսական մաթեմատիկա»,

«Տեղեկատվական անվտանգություն»,

«Կենսաբանություն»,

«Կենսաքիմիա եւ կենսատեխնոլոգիա»:

Բացի այդ, 15 անվճար տեղ հատկացվել է «Տվյալների մշակումը ֆիզիկայում եւ արհեստական բանականություն» ծրագրին, իսկ 12-ական անվճար տեղ՝ «Քիմիա» եւ «Հայոց լեզու եւ գրականություն» մասնագիտություններին:

Այսպիսով, 2026 թվականի ընդունելության արդյունքները ցույց են տալիս, որ դիմորդների հետաքրքրությունը շարունակում է կենտրոնանալ իրավաբանական, տեղեկատվական տեխնոլոգիաների, միջազգային հարաբերությունների, տնտեսագիտական եւ կառավարման մասնագիտությունների վրա, մինչդեռ մի շարք բնագիտական եւ հումանիտար ուղղություններում ընդունվածների թիվը շարունակում է մնալ ցածր:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՈՎ ԿԼԻՆԻ ՀԱՋՈՐԴ ՎԱՐՉԱՊԵՏԸ

Մեծ Բրիտանիայի վարչապետ Քիր Սթարմերը պաշտոնապես հրաժարական է տվել, իսկ երկրի նոր վարչապետ կդառնա Լեյբորիստական կուսակցության առաջնորդ Էնդի Բերնհեմը: Նա կլինի Միացյալ Թագավորության յոթերորդ վարչապետը 2016 թվականի Brexit-ի հանրաքվեից հետո:

Բուքինգհեմյան պալատի հաղորդմամբ՝ թագավոր Չարլզ III-ն ընդունել է Սթարմերի հրաժարականը: Ակնկալվում է, որ թագավորը Բերնհեմին կհրավիրի ձեւավորելու նոր կառավարություն, որից հետո վերջինս կվերադառնա Դաունինգ սթրիթ 10 եւ հանդես կգա վարչապետի պաշտոնում իր առաջին ելույթով:

Էնդի Բերնհեմը Լեյբորիստական կուսակցության առաջնորդ է ընտրվել ուրբաթ օրը՝ Սթարմերի հրաժարականից հետո: Վերջինս կուսակցության ներսում աճող դժգոհության եւ վարկանիշի անկման պայմաններում լքել է պաշտոնը՝ դառնալով Մեծ Բրիտանիայի պատմության ամենակարճ պաշտոնավարած լեյբորիստ վարչապետը:

Հրաժեշտի խոսքում Սթարմերը հայտարարել է, որ հեռանում է «ժպիտով եւ հպարտությամբ»՝ նշելով, որ վարչապետ լինելը եղել է իր կյանքի ամենամեծ պատիվը: Նա ասել է, որ իր պաշտոնավարման ընթացքում երկրի տնտեսությունն ամրապնդվել է, կրճատվել են պետական ծառայությունների սպասման ժամկետները, նվազել է ներգաղթը, ամրապնդվել է պաշտպանունակությունը եւ բարձրացել է երկրի միջազգային հեղինակությունը: Սթարմերը նաեւ զգուշացրել է, որ աշխարհում աճում են սպառնալիքները եւ ընդգծել Ուկրաինային շարունակական աջակցության կարեւորությունը:

Նա հաջողություն է մաղթել իր հաջորդին՝ հայտարարելով, որ «փոխանցում է էստաֆետը» Էնդի Բերնհեմին եւ լիովին աջակցում է նրան:

Ո՞վ է Էնդի Բերնհեմը

Էնդի Բերնհեմը Լեյբորիստական կուսակցության երկարամյա գործիչ է, որը վերջին տարիներին հայտնի էր հատկապես որպես Մանչեսթերի քաղաքապետ: Նա քաղաքականության մեջ ներկայացել է որպես Լոնդոնի կենտրոնական իշխանության եւ երկրի հյուսիսային շրջանների միջեւ հավասարակշռության կողմնակից:

Բերնհեմն իր քաղաքական կերպարը կառուցել է որպես «հյուսիսի ձայն»՝ հաճախ ընդգծելով Մեծ Բրիտանիայի հյուսիսի եւ հարավի միջեւ տնտեսական ու քաղաքական տարբերությունները:

Նա վարչապետի պաշտոնում եւս պատրաստվում է պահպանել այդ մոտեցումը: Բրիտանական լրատվամիջոցների տվյալներով՝ Բերնհեմը ծրագրում է իր աշխատանքային ժամանակը բաժանել Լոնդոնի եւ Մանչեսթերի միջեւ՝ փորձելով իշխանության մի մասը տեղափոխել մայրաքաղաքից դուրս:

Նա հայտարարել է Մանչեսթերում վարչապետական գրասենյակ ստեղծելու ծրագրի մասին, որը ստացել է «Հյուսիսային №10» անվանումը՝ ի տարբերություն Դաունինգ սթրիթի վարչապետական ավանդական նստավայրի:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

● *Անցած 3 օրում գրանցվել է 54 ավտովթար. 4 մարդ զոհվել է, 73-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՀԻԴՐՈԼՈԳԻԱԿԱՆ ՌԵԺԻՄԸ

Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոնը ներկայացրել է Սեւանա լճի հիդրոլոգիական ռեժիմը 2026 թվականի հուլիսի 13-19-ը: Սեւանա լճի մակարդակը 2026 թվականի հուլիսի 13-19-ն ընկած ժամանակահատվածում բարձրացել է 1 սմ-ով եւ կազմել՝ 1900.81 մ (19.07.26թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 16 սմ-ով, իսկ 2026 թվականի հունվարի 1-ի մակարդակից՝ 59 սմ-ով: Արփա-Սեւան ջրատարով Սեւանա լիճ տեղափոխված ջրի քանակը 2026 թվականի հուլիսի 13-19-ն ընկած ժամանակահատվածում կազմել է 5.083 մլն խմ, իսկ 2026 թվականի հունվարի 1-ից հուլիսի 19-ը ներառյալ՝ 158.017 մլն խմ: Սեւանա լճից բացթողնված ջրի ծավալը ըստ Հրազդան ՀԷԿ-ի ուղղաթեք ջրանցքի Գեղամավան դիտակետի հուլիսի 13-19-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում կազմել է 3.787 մլն խմ, իսկ ընդհանուր գումարային բացթողումը՝ հուլիսի 2-ից հուլիսի 19-ը ներառյալ՝ 7.224 մլն խմ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ ԵՆ ՇԵՂՈՒՄՆԵՐ

ՀՀ առողջապահության նախարարության Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման կենտրոնը տեղեկացնում է, որ Բյուրեղավան համայնքում 2026 թվականի հուլիսի 17-ից արձանագրված աղիքային վարակների դեպքերի առնչությամբ շարունակվում են համաճարակաբանական ուսումնասիրություններն ու կանխարգելիչ միջոցառումները: ՀՎԿԱԿ-ը սերտ համագործակցում է Բյուրեղավանի պոլիկլինիկայի, Բյուրեղավան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների եւ մյուս շահագրգիռ գործընկեր կազմակերպությունների հետ՝ վարակի հետագա տարածումը կանխելու եւ իրավիճակը վերահսկողության տակ պահելու նպատակով: Համաճարակաբանական հետազոտության շրջանակում իրականացվել են ջրի եւ կենսաբանական նմուշների նմուշառումներ.

վերցվել է 14 ջրի նմուշ,

վերցվել է 13 կենսաբանական նմուշ բուժառուներից:

Լաբորատոր հետազոտության արդյունքներով՝ ջրի 14 նմուշառման կետերից 3-ում արձանագրվել են շեղումներ: Կենսաբանական նմուշների լաբորատոր արդյունքները դեռեւս պատրաստ չեն: Այն ջրային կետերում, որտեղ հայտնաբերվել են շեղումներ, իրականացվում են կրկնակի նմուշառումներ: Միաժամանակ նմուշառումներ են կատարվում նաեւ նոր արձանագրված աղիքային վարակի օջախներում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Արթուր Հովհաննեսի Կիրակոսյանի՝Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի կողմից 2013 թվականին տրված «Ձեռնարկությունների տնտեսագիտություն եւ կառավարում (մեքենաշինության ճյուղ)» մասնագիտության AB № 161252 դիպլոմը: Գրանցման համարը՝ 13056:

ՕԼԻՄՊԻԱԴԱ

1 ԱՐԾԱԹԵ ԵՎ 4 ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼ

Չինաստանի Շանհայ քաղաքում երկու տեսական փուլով անցկացվել է «Մաթեմատիկա» առարկայի 67-րդ միջազգային օլիմպիադան, որին մասնակցել է նաեւ Հայաստանի թիմը:

Օլիմպիադային մասնակցել է 120 երկրների 666 աշակերտ՝ յուրաքանչյուր երկրից առավելագույնը՝ 6:

Հայաստանի թիմն արժանացել է 1 արծաթե եւ 4 բրոնզե մեդալի, ինչպես նաեւ 1 գովասանագրի: Արծաթե մեդալի է արժանացել «Քվանտ» վարժարանի 10-րդ դասարանի աշակերտ Հայկ Մանուկյանը, իսկ բրոնզե մեդալների են արժանացել «Քվանտ» վարժարանի 10-րդ դասարան աշակերտներ Տիգրան Հախեյանն ու Արեն Գրիգորյանը, Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ մասնագիտացված դպրոցի աշակերտներ Սարգիս Առաքելյանն (11-րդ դասարան) ու Արսեն Մակարյանը (12-րդ դասարան): Գովասանագրի է արժանացել Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ մասնագիտացված դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Արման Ասատրյանը: Թիմային հաշվարկում Հայաստանի թիմը զբաղեցրել է 43-րդ հորիզոնականը:

Հայաստանի թիմը ղեկավարել են Գրիգոր Քերոբյանը («Վորլդքուանթ» ընկերություն) եւ Նարեկ Խանդանյանը («Կրիսպ» ընկերություն): Մաթեմատիկայի 66-րդ միջազգային օլիմպիադայում, որն անցկացվել էր Ավստրալիայում, Հայաստանի թիմն արժանացել էր 3 բրոնզե մեդալի եւ 3 գովասանագրի:

ԼՈՒՐԵՐ

ԱԿԲԱ ԲԱՆԿԸ ԿԱՋԱԿՑԻ

Ակբա բանկը կաջակցի հայկական արտադրանքի արտահանմանը:

Ակբա բանկը տեղական արտադրողների զարգացումը խթանելու, աշխարհի տարբեր երկրներում հայկական արտադրանքի արտահանմանը նպաստելու եւ հայաստանյան բիզնեսի մրցունակության բարձրացմանն աջակցելու նպատակով մինչեւ սեպտեմբերի 30-ը ներառյալ առաջարկում է Հայաստանում այս պահին գործող արտահանման ֆակտորինգի լավագույն պայմանները:

Ֆակտորինգի տարեկան տոկոսադրույք

Եվրո՝ 4.9%

ԱՄՆ դոլար՝ 6.9%

Տրամադրման միջնորդավճար

Հաշիվ-ապրանքագրի գումարի 0.3% (նվազագույնը՝ 5000 ՀՀ դրամ):

Առաջարկից կարող են օգտվել Հայաստանում գործող այն կազմակերպությունները, որոնք զբաղվում են ապրանքների կամ ծառայությունների արտահանմամբ:

Ակբա բանկի կողմից տրամադրվող արտահանման ֆակտորինգի միջոցով տեղական արտադրողներն ու ծառայություններ մատուցող կազմակերպություններն իրենց արտադրանքն ու ծառայությունները կկարողանան արտահանել Եվրոպական միության երկրներ, ԱՄԷ, ԱՄՆ, Չինաստան եւ աշխարհի շատ այլ երկրներ:

Ակբա բանկն այս առաջարկով հայաստանյան ընկերությունների համար հնարավորություն է ստեղծում մեծացնել իրենց մրցունակությունն ու ընդլայնել արտահանման աշխարհագրությունն ամբողջ աշխարհում:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)

ԹԱՓՈՒՐ Է ՄՆԱՑԵԼ

2026-2027 ուսումնական տարվա բուհական ընդունելության հիմնական փուլն ավարտվել է մտահոգիչ ցուցանիշներով: Կառավարության կողմից հատկացված 12 720 տեղերից (2 133-ը՝ անվճար, 10 587-ը՝ վճարովի) համալրվել է 9620-ը: Հատկացված տեղերից 2133 անվճար են, իսկ 10587-ը՝ վճարովի, սակայն անվճար ընդունվել է 1875, իսկ վճարովի՝ 7799 դիմորդ: Արդյունքում, համակարգում մնացել է շուրջ 3 100 թափուր տեղ, որոնցից 250-ը պետության կողմից ֆինանսավորվող անվճար տեղերն են:

Դիմորդների նախապատվությունները եւ ճգնաժամային ուղղությունները

Այս տարվա տվյալները հստակ ցույց են տալիս դիմորդների խիստ պրագմատիկ մոտեցումը ապագա կարիերայի հարցում: Անկախ տարբեր ոլորտների զարգացման մասին պետական ծրագրերից՝ դիմորդներն ընտրում են այն մասնագիտությունները, որոնք աշխատաշուկայում արագ գտնելու եւ կայուն եկամուտ ունենալու հնարավորություն են տալիս: Որպես առաջատար ուղղություններ՝ շարունակում են գերիշխել իրավագիտությունը, բժշկական գիտությունները, տեղեկատվական տեխնոլոգիաները եւ միջազգային հարաբերությունները:

Հակառակ այս պատկերի՝ ավելի քան 150 մասնագիտությունների գծով գրանցվել է ծայրահեղ ցածր կամ զրոյական հետաքրքրություն: Ավելի քան 100 մասնագիտությունների համար որեւէ հայտ չի ներկայացվել, իսկ մոտ 50-ի դեպքում եղել է ընդամենը 1 կամ 2 դիմորդ: Եւ ընդհանուր 31 բուհի 119 մասնագիտություններ ընդհանրապես չեն ունեցել դիմորդներ: Ամենաշատ թափուր տեղերն արձանագրվել են գյուղատնտեսական ուղղություններում, Պոլիտեխնիկական համալսարանի ճարտարապետաշինարարական բաժնում եւ բնագիտական մանկավարժությունում՝ մասնավորապես ֆիզիկայի, քիմիայի եւ կենսաբանության ուսուցիչների պատրաստման ծրագրերում:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ

Գնահատման եւ թեստավորման կենտրոնը հուլիսի 20-ից կազմակերպում է լրացուցիչ մրցույթի (բուհերում թափուր մնացած տեղերի) հայտագրման գործընթացը:

Dimord.am կայքէջում դիմում-հայտ կարող են ներկայացնել ինչպես հիմնական մրցույթից դուրս մնացած դիմորդները, այնպես էլ հիմնական մրցույթին չմասնակցած, սակայն միասնական քննություններից դրական միավորներ ունեցողները:

Թափուր տեղերի մրցույթին մասնակցող դիմորդը կարող է հայտագրել մեկ կամ ավելի բուհի մինչեւ վեց մասնագիտություն, եթե այդ մասնագիտություններում առկա են թափուր տեղեր, եւ այդ մասնագիտությունների համար սահմանված միասնական քննություններից ունի դրական միավորներ:

Հայտագրման գործընթացը կավարտվի հուլիսի 26-ին՝ ժամը 18:00-ին:

Լրացուցիչ մրցույթը կամփոփվի հուլիսի 30-ին:

Մրցույթի կազմակերպման ընթացքում նախապատվությունը տրվելու է հիմնական մրցույթից դուրս մնացած դիմորդներին:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆ»

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԸ

Երեւանի «Ոսկե ծիրան» 23-րդ միջազգային կինոփառատոնն ամփոփվել է Կինոյի տանն անցկացված հանդիսավոր արարողությամբ, որի ընթացքում հայտարարվել են մրցանակակիրների անունները:

«Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնն անցկացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ՝ որպես կինոյի ոլորտի բյուջետային ծրագիր:

Միջազգային լիամետրաժ ֆիլմերի մրցույթում փառատոնի գլխավոր մրցանակը՝ «Ոսկե ծիրանը», շնորհվել է Մելագրոս Մումենթալերի «Հոսանքներ» (The Currents) ֆիլմին: «Արծաթե ծիրանը» ստացել է Մորթեզա Ահմադվանդի եւ Ֆիրուզե Խոսրովանի «Անցյալ. ապառնի. շարունակական» (Past, Future, Continuous) ֆիլմը, իսկ Սեբաստիան Բրամեսհուբերի «Լոնդոն» (London) ֆիլմն արժանացել է միջազգային ժյուրիի հատուկ հիշատակման, հայտնում են ԿԳՄՍՆ-ից:

«Տարածաշրջանային մրցույթում «Ոսկե ծիրանը» շնորհվել է Ամիր Ազիզիի «Ամիրի հոգում» (Inside Amir) ֆիլմին, իսկ «Արծաթե ծիրանը»՝ Ալեքսանդրե Քոբերիձեի «Չորացած տերեւ» (Dry Leaf) ֆիլմին: «Չորացած տերեւը» նաեւ արժանացել է FIPRESCI մրցանակին, որը շնորհվում է Կինոմամուլի միջազգային ֆեդերացիայի կողմից:

Կարճամետրաժ ֆիլմերին նվիրված «Կորիզ» մրցույթում «Ոսկե ծիրանը» շնորհվել է Սերուժ Հովսեփյանի «Մենավոր երկխոսություններ» (Dialogues Solitaire) ֆիլմին: Վերջինս արժանացել է նաեւ Գենադի Մելքոնյանի անվան հատուկ մրցանակին: Անվանակարգում «Արծաթե ծիրան» ստացել է Օվսաննա Գեւորգյանի «Վարձու սգավորներ» (Paid Mourners) ֆիլմը:

Ժյուրին նաեւ հատուկ հիշատակումներ է շնորհել Սոնա Խաչատրյանի «Ռելիքվիա» (Relic) եւ Արթուր Սահակյանի «Մենակ երկուսով» (Together Alone) ֆիլմերին: Թերեզա Նվոտովայի «Հայրը» ֆիլմն արժանացել է նաեւ Հայաստանում եւ Վրաստանում տարածման մրցանակին, որը ներառում է 6 000 եվրոյի դրամական աջակցություն՝ ֆիլմի տարածաշրջանային տարածումն ապահովելու նպատակով:

Փառատոնի «Փարաջանովյան թալեր» մրցանակը հանձնվել է տարածաշրջանային մրցույթի ժյուրիի նախագահ Մահմուդ Քալարիին, «Վարպետ» մրցանակը՝ Հոլիվուդի պրոդյուսեր Սեւ Օհանյանին: «Վարպետ» մրցանակի է արժանացել նաեւ կինոպատմաբան եւ ռեժիսոր Մարկ Քազընսը:

Փառատոնը եզրափակվել է Գոդֆրի Ռեջոյի «Ժուկով-ժամանակին» ֆիլմի ցուցադրությամբ»,-ասված է հաղորդագրության մեջ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՍԱՌՆԱՄԲՅՈՐԵՆ Է ԱՐՁԱԳԱՆՔԵԼ

Իսպանիայի հավաքականի կիսապաշտպան Դանի Օլմոն արձագանքել է ԱԱ-2026-ի եզրափակչից հետո Արգենտինայի ազգային ընտրանու ֆուտբոլիստների պահվածքին: Մրցանակաբաշխության ժամանակ արգենտինացիները մեջքով շրջվել էին դեպի իսպանացիները, չնայած այն հանգամանքին, որ վերջիններս նրանց համար «պատվո միջանցք» էին կազմել: Ըստ armsport-ի՝ Mundo Deportivo-ի լրագրողի հարցին Օլմոն պատասխանել է բավականին զուսպ, սակայն իմաստալից. «Դե... վերջնարդյունքում դա մեզ չի հետաքրքրում: Կարծում եմ՝ շատ կարեւոր է մտածել այն արժեքների մասին, որոնք ցանկանում ես փոխանցել շրջապատին: Մենք օրինակ ենք բազմաթիվ սերունդների ու երեխաների համար, եւ կարծում եմ՝ նրանք եւս պետք է դրական օրինակ ծառայեն ամեն ինչում եւ դեպի լավը»: Օլմոյի այս հավասարակշռված պատասխանն արտացոլում է ողջ մրցաշարի ընթացքում Իսպանիայի հավաքականի ցուցաբերած սառնասրտությունը: Կիսապաշտպանն ընդգծել է, որ ցանկանում է՝ Իսպանիան լինի մրցակցի նկատմամբ հարգալից վերաբերմունքի լավագույն օրինակ: Հատկանշական է նաեւ վիճակագրությունը. եզրափակիչ խաղում Իսպանիան կանոնները խախտել է 21, իսկ Արգենտինան՝ 24 անգամ: Սակայն իսպանացիները ոչ մի դեղին քարտ չեն ստացել, մինչդեռ արգենտինացիները պատժվել են 5 զգուշացումով: Ինքը՝ Օլմոն, որն ԱԱ-2026-ում մասնակցեց 8 հանդիպման եւ դարձավ 2 գոլային փոխանցման հեղինակ, ողջ մրցաշարն ավարտեց առանց որեւէ դեղին քարտի: Եզրափակիչում նա ընդամենը մեկ անգամ է խախտել կանոնները եւ երկու անգամ ստիպել է մրցակիցներին խախտել կանոններն իր նկատմամբ՝ աչքի ընկնելով չափազանց մաքուր խաղով:

ՀԱՎԱՆԵԼ Է

Պորտուգալիայի հավաքականի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն արձագանքել է սոցցանցերում տարածված մի տեսանյութի, որտեղ ՖԻՖԱ-ն մեղադրվում է կոռուպցիայի եւ ԱԱ-2026-ի ընթացքում Արգենտինայի ազգային հավաքականին ակնհայտորեն աջակցելու մեջ, գրում է armsport-ը: Պորտուգալացի աստղը լայքել է իսպանական «Espejo Publico» հեռուստաշոուի ինստագրամյան էջում հրապարակված գրառումը: Այնտեղ ներկայացված է լրագրող Պիլար Ռոդրիգեսի ելույթի դրվագը՝ ԱԱ-2026-ի կիսաեզրափակչի Արգենտինա - Անգլիա (2:1) հանդիպումից հետո: «Եթե չլիներ ՖԻՖԱ-ի օգնությունը, Արգենտինան պետք է պայքարից դուրս մնար դեռեւս հինգ խաղ առաջ: ՖԻՖԱ-ն աշխարհի ամենակոռումպացված կազմակերպություններից մեկն է: Ահա թե ինչու ես ամենեւին չեմ վախենում Արգենտինայից, ես վախենում եմ Ինֆանտինոյից»,- տեսանյութում հայտարարել է Ռոդրիգեսը: Հիշեցնենք, որ Արգենտինայի հավաքականը հասավ աշխարհի առաջնության եզրափակիչ, որտեղ լրացուցիչ ժամանակում 0:1 հաշվով զիջեց Իսպանիային: Ինչ վերաբերում է Պորտուգալիային, ապա թիմը լքել էր պայքարը 1/8 եզրափակչում՝ պարտվելով հենց իսպանացիներին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԹՐԱՄՓՆ ԱՄՓՈՓԵԼ Է ԱԱ–2026–Ը

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն ամփոփել է 2026 թվականի ֆուտբոլի աշխարհի առաջնության արդյունքները եւ առանձնահատուկ գովեստի խոսքեր ուղղել կազմակերպիչներին ու ՖԻՖԱ-ի նախագահ Ջանի Ինֆանտինոյին, գրում է armsport-ը:

Հիշեցնենք, որ Մունդիալ-2026-ն անցկացվեց ԱՄՆ-ում, Կանադայում եւ Մեքսիկայում՝ հունիսի 11-ից հուլիսի 19-ը: Մրցաշարի հաղթող դարձավ Իսպանիայի ազգային հավաքականը, որը Իսթ Ռաթերֆորդի (ԱՄՆ) «Մեթլայֆ» մարզադաշտում կայացած եզրափակչում լրացուցիչ ժամանակում 1:0 հաշվով պարտության մատնեց Արգենտինային:

«Ֆուտբոլի աշխարհի առաջնությունը գրանցեց վեհաշուք հաջողություն: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլոր ներգրավվածներին, բայց հատկապես՝ մեր հիանալի իրավապահ մարմինների աշխատակիցներին: Այն հարգանքը, որ բոլորը տածում են նրանց նկատմամբ, ինչպես նաեւ նրանց սերը մեր երկրի հանդեպ, այս մեծ առաջնությունը դարձրեցին պատմության մեջ անառարկելիորեն ամենաանվտանգն ու ամենադիտարժանը», - գրել է Թրամփը սոցցանցերում:

ԱՄՆ նախագահը նաեւ իր երախտագիտությունն է հայտնել մրցաշարի գլխավոր պատասխանատուներին.

«Շնորհակալություն բոլոր մասնակիցներին եւ, մասնավորապես, ԱՄՆ կառավարությունում աշխատող երիտասարդ ու եռանդուն Էնդրյու Ջուլիանիին (խմբ.՝ Սպիտակ տան՝ ԱԱ-2026-ի աշխատանքային խմբի ղեկավար), ինչպես նաեւ ՖԻՖԱ-ի ֆանտաստիկ նախագահ Ջանի Ինֆանտինոյին՝ գերազանց կատարած աշխատանքի համար: Քչերը երբեւէ կկարողանային հասնել նրան, ինչ արեց նա՝ բարձրացնելով աշխարհի առաջնությունն այնպիսի մակարդակի վրա, որը ոչ ոք հնարավոր չէր համարում: Շնորհավորում եմ բոլորին»:

ՊԱՐՏԱԴԻՐ ՉԷ

Միլանի «Ինտերի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը Գերմանիայում ընթացող ուսումնամարզական հավաքի ժամանակ խոսել է նոր մրցաշրջանի սպասելիքների, թիմի հավակնությունների եւ իր ապագայի մասին: Հայ ֆուտբոլիստը վստահ է, որ թիմն ի զորու է կրկնել նախորդ տարվա հաջողությունները, հայտնում է armsport-ը:

Դոնաուեշինգենում լրագրողների հետ զրույցում Մխիթարյանը նշել է, որ «ներաձուրիները» շարունակում են մեծ նպատակներ հետապնդել:

«Մեր հավակնությունները մեծ են: Ցանկանում ենք կրկին հաղթել առաջնությունում, նվաճել Իտալիայի գավաթն ու Սուպերգավաթը, ինչպես նաեւ հնարավորինս հեռուն գնալ Չեմպիոնների լիգայում: Դրանք բարդ, բայց միանգամայն հասանելի նպատակներ են»,- նշել է կիսապաշտպանը:

Խոսելով միլանյան ակումբի հետ պայմանագիրը եւս մեկ տարով երկարաձգելու որոշման մասին՝ Մխիթարյանն ընդգծել է, որ դեռ շատ բան ունի տալու թիմին:

«Ակումբի ղեկավարության հետ խոսել եմ միայն «Բոլոնիայի» դեմ խաղից հետո, որից հետո արել եմ իմ գնահատականները: Հասկացա, որ կարող եմ եւս մեկ տարի խաղալ այստեղ: Սակայն սա ամենեւին չի նշանակում, որ ես ավարտելու եմ կարիերաս 2027 թվականին: Հիմա պետք է կենտրոնանանք այս առաջնության վրա, իսկ հետագա տարիների մասին կմտածենք ավելի ուշ»:

Մխիթարյանը նաեւ մեծ վստահություն է հայտնել գլխավոր մարզիչ Կրիստիան Կիվուի նկատմամբ՝ նշելով, որ նրանք մի մեծ ընտանիք են, եւ մարզիչը կարողանում է հաղթանակի քաղց փոխանցել խաղացողներին:

«Նա նախորդ տարի արդեն ապացուցել է, թե ինչի է ընդունակ: Մենք նրան լիովին աջակցում ենք եւ ցանկանում ենք միասին հասնել մեր նպատակներին: Ինչ վերաբերում է ինձ, ես այստեղ եմ թիմակիցներիս օգնելու համար եւ, ի հեճուկս տարիքիս, հուսով եմ, որ անհատական առումով ավելի լավ մրցաշրջան կանցկացնեմ, քան նախորդն էր»,- Մխիթարյանի խոսքն է մեջբերում Sky Italia-ն:

●Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում հուլիսի 26-ին՝ ժամը 18:00-ին, կկայանա «Օթելլո» օպերան:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչքա՞ն է կազմում անհուսալի վարկեր ունեցող անձանց տնտեսական ակտիվության խթանման միջոցառման շահառուի վարկային պարտավորության (պարտավորությունների) մարմանն ուղղվող (բռնագանձվող) ամենամսյա գումարի չափը:

Վահագն Սահակյան, 41 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Միջոցառման շրջանակում շահառուին տրվում է ֆինանսական աջակցություն՝ շահառուի աշխատավարձից եւ դրան հավասարեցված վճարումներից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) հաշվարկված եկամտային հարկի գումարի 100%-ի չափով, որն ուղղվում է անհուսալի վարկային պարտավորության (պարտավորությունների) մարմանը:

ՀԿԱ ծառայության կողմից շահառուի նկատմամբ վարկավորողի ներկայացրած՝ հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարման ընթացքում անհուսալի վարկի մասով՝

շահառուի աշխատավարձից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) բռնագանձվող գումարի չափը սահմանվում է 20% (եթե օրենքով կամ կատարման ենթակա ակտով բռնագանձման առավել նվազ չափ սահմանված չէ)՝ 24 ամիս ժամկետով՝ սկսած շահառու ճանաչվելու վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուն հաջորդող ամսվա 1-ից.

շահառուի գույքերի նկատմամբ իրականացվող բռնագանձումները կասեցվում են՝ առանց դրանց նկատմամբ առկա արգելանքների վերացման, եթե առկա չեն այլ պահանջատերեր:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Եթե իրավաբանական անձի հաշվից 20 մլն ՀՀ դրամից ավելի գումար է փոխանցվել մի քանի ստացողների՝ յուրաքանչյուրին 20 մլն ՀՀ դրամից պակաս չափով, արդյո՞ք անհրաժեշտ է Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացնել պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի հաշվետվություն:

Աննա Վարդանյան, 65 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն դեպքում, երբ իրավաբանական անձ հաճախորդի հաշվից դեբետագրվում է 20 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումար, որը փոխանցվում է մի քանի ստացողների՝ աշխատավարձի, կոմունալ ծառայությունների կամ նմանատիպ այլ նպատակներով վճարումներ կատարելու համար, եւ յուրաքանչյուր առանձին ստացողին փոխանցվող գումարը չի գերազանցում 20 միլիոն ՀՀ դրամը, ապա Ֆինանսական դիտարկումների կենտրոն պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի մասին հաշվետվություն չի ներկայացվում: Վերոնշյալը չի վերաբերում այն դեպքերին, երբ իրավաբանական անձի հաշվից դեբետագրվում է 20 միլիոն ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող գումար՝ մեկից ավելի գործարքներով այլ իրավաբանական անձանց (այդ թվում օտարերկրյա պետություններում գտնվող) փոխանցումներ կատարելու նպատակով:

ՀՀ ԿԲ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Երեւանում արմատից չորացած հաստաբուն ծառը տապալվել է՝ կոտրելով գազախողովակներ, վնասելով ավտոմեքենաներ. ճանապարհը ամբողջությամբ փակվել է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 9 + 14	+ 24 + 29
Կոտայքի լեռներ	+ 10 + 14	+ 24 + 28
Կոտայքի նախալեռներ	+ 17 + 20	+ 31 + 34
Գեղարքունիք	+ 9 + 14	+ 23 + 28
Լոռի	+ 10 + 15	+ 26 + 30
Տավուշ	+ 11 + 15	+ 27 + 30
Արագածոտնի լեռներ	+ 9 + 13	+ 23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+ 16 + 21	+ 30 + 35

Արարատ	+ 18 + 21	+ 33 + 36
Արմավիր	+ 18 + 22	+ 35 + 37
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 13	+ 24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+ 19 + 22	+ 35 + 37
Սյունիքի լեռներ	+ 9 + 12	+ 19 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 11 + 15	+ 25 + 28
Սյունիքի հովիտներ	+ 18 + 22	+ 32 + 35
Երեւան	+ 21 + 23	+ 34 + 36

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.07.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*